ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի շնորհավորական ուղերձը Ոստիկանության օրվա առթիվ

16.04.2020

Հարգելի ոստիկաններ,
Ի սրտե և լավագույն ցանկություններով շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի՝ Ոստիկանության օրվա առթիվ:

Դուք ձեր ամենօրյա պատասխանատու աշխատանքով անմնացորդ ծառայում եք մեր պետությանն ու ժողովրդին, հասարակության անվտանգության ու մարդու իրավունքների պաշտպանության գործին:

Հատկապես այս դժվարին օրերին անուրանալի է ձեր պատասխանատու և մարդակենտրոն ծառայությունը, որը միայն գովեստի և բարձր գնահատանքի է արժանի:

Ներկայումս կարող ենք փաստել, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացին՝ ի դեմս ոստիկանության, ունի կայացած և ամուր պետական կառույց, որն արժանապատվորեն և լիարժեք իրականացնում է իր առաքելությունը:

Սիրելի ոստիկաններ, կրկին շնորհավորելով բոլորիդ մասնագիտական տոնի առթիվ՝ ցանկանում եմ անվտանգ ծառայություն, քաջառողջություն և նորանոր ձեռքբերումներ՝ հանուն Հայաստանի Հանրապետության և մեր ժողովրդի անվտանգության ու առաջընթացի:

Ամենայն հարգանքով՝ Հ. Մաթևոսյան